Ուժի մեջ է 2021թ. մարտի 12-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան_____

03 մարտի 2021թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից կենսաթոշակառուների սպասարկման համար գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

3. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխատանքային օրերին[1]՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-18:00, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- մասնաճյուղերի կողմից ծառայությունների դիմաց վճարումների ընդունում և հաշվարկադրամարկղային սպասարկում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-16:30-ը,,
- հեռահար եղանակով, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) միջոցով ծառայությունների մատուցում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:00-18:00,

ինչպես նաև, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում, Բանկի ներքին իրավական ակտերում կամ www.acba.am Բանկի պաշտոնական կայքում:

4. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

[1] Աշխատանքային օրեր՝ երկուշաբթիից ուրբաթ օրերը (բացառությամբ այն օրերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն ոչ աշխատանքային օրեր), ինչպես նաև այն օրերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն աշխատանքային օրեր:

Հ/Հ	Ծառայության տեսակը	Առավելագույն սակագինը
1.	Ընթացիկ (քարտային) հաշվի բացում և սպասարկում	անվճար
2.	Քարտերի թողարկում և տրամադրում	անվճար
3.	Ընթացիկ (քարտային) հաշվից միջոցների կանխիկացում (ԱԿԲԱ ԲԱՆԿԻ սպասարկման կետերում)	անվճար
4.	Քարտային հաշվից միջոցների կանխիկացում (այլ բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող սպասարկման կետերում)	0.5%
5.	Քարտի բլոկավորում և ապաբլոկավորում (քարտապանի պահանջով)	անվճար
6.	Բանկոմատի միջոցով քարտի առգրավման դեպքում (ԱԿԲԱ ԲԱՆԿԻ և այլ բանկերի սպասարկման կետերում) քարտի վերադարձ	անվճար
7.	Քարտի փոխարինում (քարտը կորցնելու, ՊԻՆ կոդը մոռանալու և այլ դեպքերում)	առաջին դեպքի ժամանակ այս ծառայությունը մատուցվում է անվճար, իսկ հետագայում՝ 700 ՀՀ դրամ
8.	Քարտային գործարքների վերաբերյալ ամսական քաղվածքի տրամադրում	անվճար
9.	Անկանխիկ վճարումներ	անվճար
10.	Քարտային հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
11.	Գերածախսի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	21%
12.	Հաշվին մուտք եղած գումարների տրամադրման/հասանելիության ժամկետ	առավելագույնը հաջորդ աշխատանքային օրը
13.	Թաղման նպաստի և կենսաթոշակառուի մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումարների կանխիկ վճարում (առանց Շահառուի ընթացիկ կամ քարտային հաշվին մուտքագրվելու)	անվճար
14.	Թաղման նպաստի և կենսաթոշակառուի մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումարների կանխիկ վճարում Շահառուի կողմից նշված ընթացիկ կամ քարտային հաշվին մուտքագրվելուց հետո	համաձայն տվյալ պահին Բանկի կողմից կանխիկացման համար սահմանված միջնորդավճարի